

## ԴԻՄԱԳԻԾԻ ՀԱՐՑ

Ամեն գեղարուեստական հանդես կ'աշխատի իր ուրոյն դիմագիծն ունենալ: Դիմագիծի հարցը առաւել չափով Հայագիտական Հանդէսի մը գլխաւոր հարցադրումներէն ըլլալու է, որոնց մաս կը կազմէ նաեւ այն, թէ հայագիտական հրատարակութիւն մը մասնագիտացա՞ծ, այսինքն՝ հայագիտութեան միայն տունեա՞լ մարզի մը նուիրուած ըլլալու է:

Երբ հաւաքականութեան մը մօտ ուսումնասէր մարդիկը բազմաթիւ են, անոնց ուսումնասիրութեանց ստեղծաշարն ընդարձակ է և անոնց հրատարակութեան նուիրուած հանդէսներն ալ բազմաշատ, ինչպէս Արեւմտեան Աշխարհին մէջ, այս հարուստ բազմազանութիւնն իսկ անոնցմէ իւրաքանչիւրը պիտի մղէ մասնագիտութիւն մը ջոկելու, մասնագիտացումի մը նուիրուելու, մին՝ ուղղելով, օրինակ, դէպի Արեւելագիտութիւն, միւրը դէպի Ծայրագոյն Արեւելքի մշակոյթ, երրորդ մը դէպի Քիւզանդագիտութիւն, ելն.:

Իսկ Հայ Մշակոյթի ներկայ աշխարհէն ներս լոյս տեսնող հայագիտական հրատարակութիւնները թիւով սահմանափակ են և անոնց մշակած նիւթերն ալ փոքր ազգի մը շուրջ սահմանափակուած: Այս պայմաններուն մէջ մասնագիտացումի անունով Հանդէսէ մը նիւթի սահմանափակում պահանջելը՝ համագօր պիտի

ըլլար, կը կարծենք, կարգ մը նիւթեր հայագիտութենէն բացառելու, իսկ կարգ մը ուսումնասէրներ իրենց աշխատասիրութեանց լոյս ընծայումէն զրկելու, առաւել՝ ցարդ անմշակ թողուած կամ երկրորդական նկատուած հայագիտական մարզերը մութի մէջ ձգելու: Եւ ասիկա ո՞ր մէկ սկզբունքով բացատրելի է:

Կը կարծենք, թէ Արաբական աշխարհի կամ Միջին Արեւելքի պայմաններուն մէջ հրատարակուող *Հայկազեան Հայագիտական Հանդէսը*, իր դիմագիծին բնորոշումին գծով, պիտի նախընտրէ նիւթի խտրականութենէն աւելի՝ ուսումնասիրութեան մը լրջութիւնը, անոր մատուցման մակարդակը եւ հեղինակին ցուցաբերած գիտական մերձեցումը:

Հայագիտութիւնը, Հայ Մշակոյթի եւ Մտքի զարգացման ասպարէզէն ներս, ինքնին փակ աշխարհ է: Չայն աւելի փակ դարձնելը, մասնագիտացումի անունով, մեր ո՞ր բարիքին կրնայ տանիլ:

Կը համարինք, թէ Հայաստանի եւ Սփիւռքի այժմեան սուղ պայմաններուն մէջ, Հայագիտական որեւէ լուրջ Հանդէս արդէն իսկ լայն չափով մասնագիտացած հրատարակութիւն նկատուելու է:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ**

#### **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ**

Դոկտ. Արտա Էքմեքճի  
Դոկտ. Արշալոյս Հ. Թոփալեան  
Ժիրայր Դանիէլեան  
Դոկտ. Արա Սանճեան  
Անդրանիկ Տազետեան

#### **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

Հայր Անդրանիկ Վրդ. Կռանեան

## A QUESTION OF IDENTITY

Every periodical strives to have its unique identity.

This issue is a major concern for every review specializing in Armenology. Should an Armenian studies periodical have a particular field of interest or not?

If a society abounds in scholars with diverse interests and numerous periodicals, as is the case in the West, then this abundance will naturally drive each periodical toward a specific field of specialization.

On the other hand, periodicals pertaining to Armenian Culture are still few in number, their concerns evolve around Armenia and the Armenians.

We believe that, under these circumstances, such an undertaking toward "specialization" will be tantamount to excluding certain subjects or topics from the already accepted bounds of the field of Armenology and depriving certain scholars from the right to have their research papers published.

Furthermore, this particularization will leave out certain spheres, that have so far been left relatively unnoticed or labeled as "secondary". These secondary spheres should have the oppor-

tunity to grow and be accepted as new sub-disciplines in their own right.

Hence, *Haigazian Armenological Review*, which is published in the Arab East, prefers to publish serious and competitive articles in any sub-discipline imaginable rather than discriminate against any particular field.

Armenology is already a relatively "closed" domain. To narrow its scope even further - under the label of specialization - will serve no good purpose.

Under the relatively difficult conditions at present both in Armenia and the Diaspora, every serious review in Armenian Studies must already be viewed as a somewhat specialized publication.

#### EDITORIAL STAFF

#### EDITORIAL STAFF

Dr. Arda Ekmekji

Dr. Arshalouys H. Topalian

Antranik Dakessian

Dr. Ara Sanjian

Jirayr Tanielian

#### EDITOR-IN-CHIEF

Father Antranik Granian